ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» հունիսի 2019 թվականի N 394-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169[1] և 219[1] հոդվածների պահանջներով և հաշվի առնելով այն, որ «ԱՐԻԿՈ-ԳՈՌ» ՍՊԸ-ի տնօրեն Արամայիս Վարդանի Գալումյանի կողմից գույքահարկի և հողի հարկի հաշվարկը համայնքապետարան չի ներկայացվել սահմանված ժամկետում, ***որոշում եմ.***

1.«ԱՐԻԿՈ-ԳՈՌ» ՍՊԸ-ին՝ տնօրեն Արամայիս Վարդանի Գալումյան, ենթարկել վարչական պատասխանատվության տուգանքի ձևով՝ 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

2.Պարտավորեցնել «ԱՐԻԿՈ-ԳՈՌ» ՍՊԸ-ի տնօրեն Արամայիս Վարդանի Գալումյանին, օրենքով նախատեսված ժամկետում մուծելու տուգանքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հունիսի 28
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«1» հուլիսի 2019 թվականի N 395-Ա

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Ձորաղբյուր գյուղի ավագանու 2012 թվականի հուլիսի 2-ի թիվ 19-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1. Արիֆոն Ռադիկի Շահգելդյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0386-0007 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության 1800,0 քառ.մ մակերեսով վարելահողից 700,0 քառ.մ մակերեսով հատված փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հասարակական կառուցապատման համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 20112018-07-0097, տրված 2018 թվականի նոյեմբերի 20-ին, «ԳԵՈԿԱԴ 55» ՍՊԸ-ի կողմից 2019 թվականի հունիսի 28-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հողամասի բաժանման հատակագիծը):

2. Արիֆոն Ռադիկի Շահգելդյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր գյուղի 07-042-0386-0007 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության 1800,0 քառ.մ մակերեսով վարելահողից առանձնացված 700,0 քառ.մ մակերեսով բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, Մասիս-Աբովյան մայրուղի, թիվ 1:

3. Առաջարկել Արիֆոն Ռադիկի Շահգելդյանին, եռամսյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105221171 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 3 139 500 (երեք միլիոն մեկ հարյուր երեսունինը հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

4. Աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝

1)իրականացնել հսկողություն սույն որոշման երրորդ կետի նկատմամբ,

2)սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

5.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության պետական կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է, աշխատակազմի քարտուղար՝ Ս.Թադևոսյան

«01» «07» 2019 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«1» հուլիսի 2019 թվականի N 396-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

Թույլատրել Ջրվեժի համայնքապետարանին՝ իրականացնելու Ջրվեժ համայնքի փողոցների ասֆալտապատման շինարարական աշխատանքները, համաձայն «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-19/21» գնման պայմանագրի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 1
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«2» հուլիսի 2019 թվականի N 397-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետով և երկրորդ մասով, ***որոշում եմ.***

1.Աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու, ծառայողական պարտականությունները որակյալ կատարելու համար ստորև նշված աշխատակիցներին և համայնքային ծառայողներին խրախուսել միանվագ դրամական պարգևատրումով՝ հետևյալ չափերով.

Պետրոսյան	Ռոբերտ - համայնքի ղեկավար	240 000 դրամ
Սանթրոսյան	Նորայր - համայնքի ղեկավարի տեղակալ	130 000 դրամ
Կարապետյան	Կորյուն - Ձորաղբյուր գյուղի վարչական ղեկավար	150 000 դրամ
Գևորգյան	Նորիկ - Ձովք գյուղի վարչական ղեկավար	150 000 դրամ
Թադևոսյան	Սուսաննա - աշխատակազմի քարտուղար	200 000 դրամ
Մարգարյան	Անահիտ - բաժնի պետ	175 000 դրամ
Հարությունյան	Լևոն - բաժնի պետ	160 000 դրամ

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Անահիտ Մարգարյանին՝ վճարումն իրականացնել բյուջեի համապատասխան հոդվածից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 2
գ.Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«2» հուլիսի 2019 թվականի N 398-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 30-րդ և 48-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 10-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 1 հասցեի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողակտորին կից, համայնքային սեփականություն հանդիսացող 1100,0 քառ.մ մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողակտորին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Զովք, 10-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 1/1:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ Ջրվեժ համայնքի Զովք գյուղի 10-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 1/1 հասցեում գտնվող գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 2
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«2» հուլիսի 2019 թվականի N 399-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Վարդան Աղվանի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 45-րդ փողոցի թիվ 3 հասցեի տնամերձ հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ նկուղային և մանսարդային հարկով մեկ հարկանի բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 2
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«2» հուլիսի 2019 թվականի N 400-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Ավետ Մարտինի Միքայելյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Այգեգործական 21-րդ թաղամասի թիվ 11 հասցեի այգեգործական հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ երկհարկանի բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 2
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«2» հուլիսի 2019 թվականի N 401-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացիներ Գալինա Վասիլիի Եդիգարյանի և Շահբազ Խաչատուրի Հարությունովի խնդրանքը, ***որոշում եմ.***

Գալինա Վասիլիի Եդիգարյանին և Շահբազ Խաչատուրի Հարությունովին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ձորաղբյուր 1–ին փողոց թիվ 40 հասցեից բաժանված S_1=1000,0 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 1-ին փողոց թիվ 40, S_2=1000,0 քառ.մետր մակերեսով գույքին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ձորաղբյուր, 1-ին փողոց թիվ 40/1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 2
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«2» հուլիսի 2019 թվականի N 402-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի ԹԻՎ 311-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերի և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի հունիսի 28-ի թիվ 37-Ա որոշումը, ***որոշում եմ.***

1.Համայնքի ղեկավարի 2019 թվականի մայիսի 30-ի «Հողատարածքի օգտագործման իրավունքի հիմքերը վերականգնելու մասին» թիվ 311-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանի առաջին պարբերությունում և որոշման 2-րդ կետում «Արթուր Ալբերտի Գևորգյանի» բառերը փոխարինել «Արթուր և Մարտին Ալբերտի Գևորգյանների» բառերով,

2) որոշման նախաբանի երկրորդ պարբերությունում և որոշման 1-ին կետում «Արթուր Ալբերտի Գևորգյանին» բառերը փոխարինել «Արթուր և Մարտին Ալբերտի Գևորգյաններին» բառերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 2
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«2» հուլիսի 2019 թվականի N 403-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 124-րդ կետով, ***որոշում եմ.***

Թույլատրել Թաթոս Ժորժիկի Եփրեմյանին շարունակելու սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 30-րդ փողոցի թիվ 11 հասցեի տնամերձ հողակտորում 2017 թվականի հունիսի 12-ի թիվ 8 շինարարության թույլտվությամբ տրված երկու բնակելի տների և ավտոտնակի կառուցման շինարարական աշխատանքները, համաձայն հաստատված նախագծի և թույլտվության ժամկետը երկարաձգել մինչև 2020 թվականի հունիսի 1-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 2
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«3» հուլիսի 2019 թվականի N 404-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Թույլատրել «ՍԵՐԵՆԳԵՏԻ» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Հայկ Աբովի Աբրահամյան, զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացմամբ Ջրվեժ համայնքի Զորաղբյուր գյուղի Ազատության փողոցի թիվ 72 հասցեում՝ 2019 թվականի հուլիսի 1-ից սեպտեմբերի 30-ը:

2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

3.Պարտավորեցնել «ՍԵՐԵՆԳԵՏԻ» ՍՊԸ-ին՝ տնօրեն Հայկ Աբովի Աբրահամյան, գործունեությունը ծավալել գործող օրենսդրությանը համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 3
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«3» հուլիսի 2019 թվականի N 405-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Թույլատրել անհատ ձեռնարկատեր Հովհաննես Հենրիկի Մինասյանին՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 15-րդ փողոցի թիվ 7 հասցեում զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացմամբ 2019 թվականի հուլիսի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

2.Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 3
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ jrvezh.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«3» հուլիսի 2019 թվականի N 406-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի պահանջով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին՝ 2019 թվականի հուլիսի 1-ից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով՝

1) Գոռ Կուրգինի Խումարյանին՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 18-րդ փողոցի թիվ 21 հասցեում,

2) Անի Վաղարշակի Մելտոնյանին՝ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 58 հասցեում:

2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հուլիսի 3
գ.Ջրվեժ